ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Թ. Հակոբյան

31.08.2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Վայքի ավագ դպրոցի 11-րդ դասարան
հումանիտար հոսք

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Սաղաթելյան Արմինե Սուրենի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023-2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)** *Դասարանում սովորողների թիվը 19 է, որից 12 աղջիկ և 7 տղա, որից 4-ը գերազանցիկ են: Բավականին խելացի են, ակտիվ և կազմակերպված: Կոլեկտիվը միասնական է: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: ՈՒնեն հարգալից վերաբերմունք ուսուցիչների և միմյանց նկատմամբ: Միրով են հաճախում դպրոց: Ակտիվորեն մասնակցում են կազմակերպվող բոլոր միջոցառումներին: Չնայած դասարանի տղաներն ակտիվ են ու աշխույժ, սակայն դա չի վերածվում անկարգության:*

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում** *Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Անբավարար գնահատական ստացող աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկվեն այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենային հետևելու, համագործակցություն, փոխօգնություն) :*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն *Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքներն այդ նյութի վերաբերյալ: Բերել օրինակներ կյանքից, ձևավորել գեղագիտական ճաշակ:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Հայրենասիրական կրթության վերաբերյալ կազմակերպել միջոցառումներ և քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որոնցում ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն *Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները մարմնամարզության և այլ հնարների միջոցով:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:*

4. Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց - ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	<<Ողջույն 11-րդ դասարան >> Նպատակն է աշակերտներին նախապատրաստել նոր ուսումնական տարվան:	01 սեպտեմբեր	դասղեկ
II	Զրույց <<Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում >> թեմայով: Նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքներն ու պարտականությունները:	08 սեպտեմբեր	դասղեկ
III	Զրույց <<Ես էլ քեզ նման եմ>> թեմայով: Հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	15 սեպտեմբեր	դասղեկ
IV	Զրույց Հայաստանի երրորդ հանրապետության մասին: Նպատակն է ծանոթացնել երրորդ հանրապետության ստեղծման պատմությանը:	22 սեպտեմբեր	դասղեկ
V	<< Կարողությունների հստակեցում >> թերթիկի միջոցով հստակեցնել, թե ինչ կարողություններն են ավելի զարգացած:	29 սեպտեմբեր	դասղեկ
VI	<< ՈՒրիշներին ընկալելը>> թեմայով քննարկման նպատակն է հասկանան միևնույն երևույթը տարբեր կերպ ընկալելու անխուսափելիությունը:	06 հոկտեմբեր	դասղեկ
VII	<< Ինչ է կարծրատիպը>> նպատակն է աշակերտները հասկանան կարծրատիպի էությունը:	13 հոկտեմբեր	դասղեկ
VIII	<< Կարծրատիպերի առաջացման պատճառները>> Նպատակն է աշակերտներին հասկացնել կարծրատիպերի առաջացման պատճառները:	20 հոկտեմբեր	դասղեկ
IX	<< Հիմնավոր ընդհանրացումների կատարում >> Աշակերտները կարողանան բացահայտել կարծրատիպեր, կատարեն հիմնավոր ընդհանրացումներ:		դասղեկ
X	<< Ինչ է խտրականությունը>> նպատակն է սովորեցնել խտրականության սահմանումը, կապել խտրականությունը իրական կյանքին:		դասղեկ
XI	«Խտրականության տեսակները» նպատակն է կարողանան զանազանել խտրականության տեսակները, վերլուծել խտրականության դրսևորման ձևերը և հետևանքները:		դասղեկ
XII	<< Խտրականության հետևանքները >> աշակերտները կառանձնացնեն խտրականության տարբեր դրսևորումները և կվերլուծեն հետևանքները:		դասղեկ
XIII	<< Խտրականության դեմ պայքարի հնարավոր ձևերը>> նպատակն է աշակերտները ձեռք բերեն խտրականության դեմ պայքարի կարողություններ:		դասղեկ

XIV	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:		դասղեկ
XV	<< Գնահատիր ինքդ քեզ>> նպատակն է արժևորել արժե -համակարգ և կարողանալ կատարել ինքնավերլուծություն:		Դասղեկ
XVI	Զրույց Ամանորյա տոնակատարության շուրջ: Նպատակն է ծանոթացնել տարբեր ազգերի Ամանորյա սովորույթներին:		դասղեկ
XVII	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:		դասղեկ
XVIII	<< Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:		դասղեկ
XIX	<< Հայոց բանակը 23 տարեկան է>> նպատակն է աշակերտներին ծանոթացնել հայոց բանակի ստեղծման պատմությանը, կարևորել նրա դերը և նշանակությունը:		դասղեկ
XX	<< Բարեկամներ և թշնամիներ >> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները:		դասղեկ
XXI	<< Ինչպես վարվել աղբի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:		դասղեկ
XXII	<< Սպառողների իրավունքներ >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես սպառողներ:		դասղեկ
XXIII	<< Քաղաքացիական ինքնություն >> կիմանան ինչ է քաղաքացիական ինքնությունը, կհասկանան թե քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ:		դասղեկ
XXIV	<< Ինչու է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:		դասղեկ
XXV	<< Ապագայի ծառը >> խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները		դասղեկ
XXVI	<< Գնահատվող մրցույթ >> աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները կկարողանան խմբում հաջողությունն ապահովելու համար:		դասղեկ
XXVII	<< Նախապաշարումներ >> ներկայացնել թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել:		դասղեկ
XXVIII	<< Պատասխանատու քաղաքացի >> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:		դասղեկ

XXIX	<< Պետք է արդյոք խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք:		դասղեկ
XXX	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:		դասղեկ
XXXI	<< Ասացվածքի ամբիոն >> աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասավածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ, մարդկանց նկատմամբ հարգանք, մարդասիրություն:		դասղեկ
XXXII	<<Ազգային զարթոնք>> ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:		դասղեկ
XXXIII	«Ջուրը կյանք է» Նպատակն է գնահատել ջրի դերն ու նշանակությունը:		դասղեկ
XXXIV	Մնաս բարով 11-րդ դասարան		դասղեկ

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը, ամիսը	Քննարկվող օրակարգի հարցերը	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
08.09	1. Ծնողական խորհրդի ընտրություն 2. ՈՒսումնական տարվա կատարվելիք աշխատանքների քննարկում	Ընտրվեց ծնողական խոր-հուրդ, քննարկվեց ուսում-նական տարվա կատարվե-լիք աշխատանքները:	Կատարված է

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Անցկացման օրը, ամիսը	Քննարկվող հարցերը	Ծնողական խորհրդի նիստերի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
08.09	Ծնողազուրկ, սոցիալապես անա-պահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովելու հարցը:	Որոշեց ծնողազուրկ, սոցիալա-պես անապահով աշակերտ-ներին աշակերտներին անվճար տրամադրել դասագրքեր:	Կատարված է

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Անցկացման Օրը, ամիսը	Քննարկվող հարցերը	Զրույցի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն